

ՀԱՅ ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ*

(Տեսութիւն հայ սովորութեան իրաւունքից)

IV

Հայ նահապետական գերդաստանը ոչ միայն կրօնական միութիւն է, նա իսկապէս միևնոյն ժամանակ ստացուածքի միութիւն է, այսինքն մի համայնք, որի անդամները ունեն սեփականութեան մի ընդհանուր, անբաժանելի իրաւունք: Հայ նահապետական գերդաստանի ընդթը, իբրև սեփականատիրական անբաժանելի իրաւունքի ներկայացուցիչ-միաւորի, կայանում է նրանում, որ նրա բաղկացուցիչ անդամները հանդէս են գալիս իբրև մի համայնքի մէջ համախմբուած արեւակից ազգականներ, որոնք միաբանութեամբ տէր են համարւում ամբողջ գերդաստանական ինչքի: Նրանց այդ տիրապետութիւնն արտայայտւում է նրանով, որ նրանք ընդհանուր-միաբան պոփրով և միջոցներով շահագործում են համայնքի գոյքը ու նրանից ստացուած արդիւնքն էլ միաբան կերպով սպառում են:

Ի՞նչն է համարւում ընտանեկան սեփականութիւն, գերդաստանական ընդհանուր ստացուածք: Ընտանեկան համայն ստացուածքի մէջ հաւասարապէս պարունակւում է թէ՛ շարժական և թէ՛ անշարժ գոյքը, գիւղական տունը իր բոլոր շէնքերով (օջախը), հողաբաժինը (նաև նագէլի հողը), ցանկապատած տեղերը, տաւարն ու անասունները, երկրագործական գործիքները, տնտեսական պարագաները, բնակարանի կահ-կարասիքը և այլ շարժական իրերը: Նոյն իսկ եթէ գերդաստանի իւրաքանչիւր անդամը դուրսը կամ օտարութեան մէջ վաստակի որոշ գումար, յայտնի կապիտալ իր անձնական սեփական աշխատանքով, այնուամենայնիւ նա չի կարող այդ վաստակածը իր

*) Shu փետր. 1908

անձնական սեփականութիւն համարել, այլ պարտաւոր է մտցնել գերդաստանի համայնական սեփականութեան մէջ, միացնել ընտանեկան ընդհանուր գոյքին: Եւս առաւել գերդաստանի համայնական գոյքի մէջ է մտնում, եթէ նրա անդամներից որեւէմէկը վաստակել է որոշ գումար գերդաստանական կա իտալի օգնութեամբ: Ուրեմն բացակայում է իսպառ ստացուածքի անհատականութեան որեւէ նշոյլ: Այստեղ սովորութեական իրաւունքը գերդաստանական գոյքի ընդհանուր սեփականութեան նկատմամբ ոչ մի տարբերութիւն չի գնում այն իրաւաբանական հասկացողութիւնների մէջ, որոնք էապէս գոյութիւն ունեն, այն է պապական կամ հօրական (սերնդական) գոյքի և բարեվասակ՝ անձնական աշխատանքով վաստակած գոյքի սեփականութեան գաղափարների միջև: Սակայն նոյն սովորութեական իրաւունքը այնուամենայնիւ իրականութեան մէջ առաջ է բերել որոշ բացառութիւններ անձնական սեփականութեան վերաբերմամբ, որոնց վրայ չի տարածւում ընտանեկան ստացուածքի ընդհանուր, համայնական սեփականութեան գաղափարը: Դա, նախ և առաջ, այսպէս անուանած արնագիւնն է, այսինքն այն գումարը, որը պատկանում է հարսերին և կազմւում է հարսին նշանադրութեան, պսակադրութեան ու որդեծնութեան միջոցներին դրուած ընծաներից՝ զարդերից ու դրամներից: Զաւախքում «միակ բանը, որի վրայ չի տարածւում տան մեծի իշխանութիւնը, դա հարսերի փողն է: Թէև հարսերը իրենց հետ փող չեն բերում, սակայն վաճառում են իրենց զարդերը, հագուստները և խնամոնց տուած օսկիները, մանրելով մի գումար են գոյացնում և իրենց անունով շահով են տալիս: Այնուհետև այն տեղերի վերաբերմամբ, ուր արդէն գոյութիւն ունի օթիտի սովորութիւնը, հարսի բերած օթիտը՝ զգեստները ու տան անհրաժեշտ պարագաները, թէև համարւում են կնոջ անձնական սեփականութիւն, բայց և մըտնում են ընդհանուր գերդաստանական գոյքի մէջ ի տի-

* Ե. Լաւայեան. Զաւախք, Եր. 179

րապետութիւն ամբողջ ընտանեկան համայնքի, ենթարկուած են գերդաստանի կողմից օգտուելու իրաւունքին: Միմիայն գերդաստանի կաղմալուծման դէպքում, սրգիւնների բաժանման ատեն, այդ օժիտը զատուում է իրական հատական ստացուածք ընդհանուր բաժանուելիք գոյքից և մտնում է կրկին նրա սեփականատէր, կնոջ ձեռքը*։ Նոյն այդ գաղափարը, որ այդպէս ամուր հիմք է բռնել սովորութեան իրաւունքի մէջ, ստիպուած է եղել ընդունել նաև Միսիթար Գօշը իր Գատաւատանագրքում, ուր երկրորդ մասում ձԸ յօդուածի հիման վրայ ճանաչուում է հարսերի բաժինների անձնական սեփականութեան իրաւունքը՝ «եւ յորժամ բաժանիցին եղբարք ի միմեանց և բաժանումն արասցի հայրենեաց, նախ զհարսանցն բաժինսն յայտ արասցեն և յիւրաքանչիւրսն տայցեն, և ապա ինքեանց հայրենեացն, Իսկ եթէ ի մէջ եղբարցն ծախեալ իցէ ուրուք բաժին—յամենեցունց կանգնեացի, զի տէր է իւրաքանչիւր զք իւրոցն»։ Եւ վերջապէս անձնական սեփականութեան իրաւունքի ներքոյ է մտնում տեղ տեղ նաև գերդաստանի անդամների հագած շորերը, զարդերը, զէնքերը։

Ընդունելով, որ հայ նահապետական գերդաստանը ներկայացնում է մի ընդհանուր գոյքի սեփականատէր, անբաժան ստացուածքի իրաւատէր, միւս կողմից նկատում ենք, որ հատարակական—տնտեսական յարաբերութիւնների մէջ նա հանդէս է գալիս միմիայն իր նահապետի, քանակի, պապի, մի խօսքով գերդաստանի մեծի, աւագի անձնաւորութեամբ։ Նահապետն է այն անձը, որի մէջ կաղապարուում է գերդաստանի ամբողջ իրաւաբանական նշանակութիւնը։ Նա է համարուում իրաւական յարաբերութիւնների ու երևութների մէջ իրաւունքի սուբյեկտը, հետեւապէս և պաշտպտնողն ու պատասխանատու ամբողջ ընտանեկան գոյքի թէ գերդաս-

* Անդ. 177 և 178. Зелинский—Народно-юридическ. обычаи армянъ. եր. 31—33։

տանի անդամների առաջ և թէ հասարակական-իրաւաբանական յարաբերութիւնների մթնոլորտում: Նա նախանձախնդիր է և հսկում է ընտանեկան գոյքի բարգաւաճմանը ու հարստութեանը թէ իրերի գնման ու փոխանակութեան եղանակով, թէ տնտեսական պաշարների դիզելու միջոցով: Նահապետը պատասխանատու է ընտանեկան գոյքի այն բոլոր փնասների համար, որոնք կատարուել են նրա գերդաստանի անդամների ձեռքով: Որդիների պարտքերի ու հասցրած փնասների համար ի դիմաց ամբողջ գերդաստանական ստացուածքի պատասխանատու է նահապետը, պարտատէրերն ու փնասուած անձնաւորութիւններն իրենց պահանջների բաւարարութեան համար պիտի դիմեն այդ նահապետին, և սա իրաւունք չունի բացասելու, ժխտելու այդ իրաւացի պահանջները, քանի որ այդ անդամները տակաւին անբաժան են ու պատկանում են այդ գերդաստանին:

Սակայն նահապետը լինելով ընտանեկան ընդհանուր սեփականութեան իրաւաբանական ներկայացուցիչը հասարակական փոխադարձ յարաբերութիւնների մթնոլորտում և ճանաչուելով իրաւաբանօրէն միակ պատասխանատու տէրը ամբողջ համայնական գոյքի, միանգամայն անկախ չէ իր իր բոլոր գործողութիւնների մէջ ընտանեկան ընդհանուր գոյքի հարցերի որոշման ու տնօրինման վերաբերմամբ: Գերդաստանի չափահաս ու աշխատաւոր անդամները իրաւունք են համարում որոշ հսկողութիւն ունենալ իրենց նահապետի գործողութիւնների վրայ և ընդամին պահանջել, որ լուրջ տնտեսական-գոյքի հարցերի առեւ իրենց ընդհանուր խորհրդակցութեամբ ու համաձայնութեամբ կայացնէ այն որոշումները, որոնցից կախուած է ընդհանուր ընտանեկան սեփականութեան ամբողջութիւնը: Ուրեմն տան մեծը իր անձնական որոշումների համար, որոնք վերաբերում են գերդաստանի ընդհանուր գոյքի որեւէ մասի օտարացման կամ մի նոր մասի գնման, կանխապէս պէտք է խորհրդակցի և ակնյայտնի կամ լռելեայն համաձայնութիւն ունենայ բոլոր անդամների կող-

մից: Հակառակ դէպքում գերդաստանի որևէ մէկ անդամի բողոքը բաւական է, որպէս զի որոշումը ոչնչանայ կամ արդէն կատարած պայմանագրութիւնը առ ոչինչ համարուի: Զարմանալի չէ, որ նոյն սովորութեական—իրաւաբանական հայեացքը ներմուծուել է Մխիթար Գօշի Դատաստանագրքի մէջ, որով հնարաւորութիւն են ստանում եզրակացնելու նախ՝ որ Մխիթար Գօշի ժամանակները տիրապետում էր նահապետական գերդաստանական կազմը և ապա՝ այդ կազմի տնտեսական—իրաւաբանական բնոյթը: «Վաճառք ամենայն հաստատին, յորժամ որք վաճառին՝ ամենեցուն յանձնառութեամբ և վկայութեամբ ընդ նոսա իցէ: Ըստ այսմ—[թէ հայր վաճառիցէ, պարտէ որդւոց և դստերաց կամքն ընդ նմա լինել և եղբայրք, կամքն որք ժառանգեցին: Նմանապէս՝ [թէ որդին վաճառէ—հօրն և այլ եղբարցն և քերցն: Ապա [թէ ոչ—յորժամ կամին անդրէն դարձուցանել՝ իշխան լիցին [թէ և գրով հաստատեալ իցէ. (յօդ. 35, մաս երկրորդ)*:

Մենք մինչև այստեղ նկատի առանք, [թէ ինչ նշանակութիւն ունի գերդաստանի տնտեսական—իրաւաբանական դրութեան վերաբերմամբ նրա հնդհանուր համայնական ստացուածքը: Քանի որ գերդաստանական կապիտալը, այս դէպքում ընդհանուր համայնական շարժական ու անշարժ ստացուածքը, համարւում է մի անբաժանելի ընտանեկան սեփականութիւն, ակներև է, որ այդ կապիտալի տէր—գերդաստանի անդամների տնտեսական ամբողջ գործունէութիւնն էլ կաղապարւում է մի հասկացողութեամբ, պարփակւում ու մարմնանում է մի սուբյեկտի՝ տնտեսական միաւորի մէջ, այն է ընտանեկան համայնքի, որ ստանում է առանձնայատուկ բնոյթ, վերածւում է ընորոշ տնտեսական կատեգորիի: Այդ հիման վրայ, հայ նահապետական գերդաստանը ներկայացնում էր մի ինքնավիճակ տնտեսութիւն, [թէ արտադրողական և [թէ սպառողական տնտեսական միութիւն:

* Մխիթար Գօշ—Դատաստանագրք հայոց՝ հրատ. Վաս. հան. Ժ. Վ. Բառտամեանի՝ եր. 416.

V

Նահապետական գերդաստանը իր տնտեսական գործունէութեամբ ընդգրկում է ամբողջ արտադրութիւնը՝ բնակարանի, հագուստի, սնունդի և այլ նիւթական անհրաժեշտ բարիքների պատրաստութեան հոգսերը. ընդգրկում է այդ բոլոր պատրաստած արգասիքների ոպառումը: Մի խօսքով այստեղ կատարում է տնտեսական պրոցեսը սկզբից մինչև վերջ: Այդ տնտեսութիւնը, դոյացած լինելով ու պահպանուելով այնպիսի պայմաններում, երբ մարդկային տնտեսական գործունէութիւնը բովանդակուած է ամբողջովին բնական բարիքներից անմիջապէս օգտուելու սկզբունքի մէջ, անշուշտ պիտի կրէր առանձնացած ինքնամիտք բնաւորութիւն: Նա միանգամայն ինքնուրոյն էր իր հասարակական գրութեամբ, քանի որ ոչ մի կախումն չունէր վաճառումից ու դրամական վարկից առ ի չգոյէ որևէ շուկայի: Գերդաստանի բոլոր անդամները համարւում են միեւնոյն ատեն նաև համայնական տնտեսութեան անդամներ, աբաժան աշխատաւորներ, որոնք պարտական են պահպանելու գերդաստանի գոյութիւնը իրենց անձնական աշխատանքով, անխտիր ու առանց ծուլանալու մասնակցելու են գերդաստանական կազմի ամբողջ տնտեսական գործունէութեանը:

Նախընթաց գլխում տեսանք, որ սովորութական իրաւունքը հասարակական փոխադարձ յարաբերութիւնների մթնոլորտում համայնական դոյքի, գերդաստանական սեփականութեան իրաւատէր է ճանաչում միմիայն նահապետին: Այդ նահապետն էլ գերդաստանի տնտեսական կեանքում պահում է իր տիրապետող դերը: Յիրաւի, բոլոր ժողովրդների նահապետական—գերդաստանական կազմի մէջ նկատում ենք նահապետի խաղացած դերը բովանդակ տնտեսական գործունէութեան մէջ, նա բաժանում է ընտանիքի անդամների միջև ամբողջ աշխատանքը. նա հանգիստանում է իբրև կազմակերպիչ գործօն և հիմնուելով իր իրաւաբանական իշխանութեան վրայ

ղեկավարում էր գերագատանի բոլոր տնտեսական շահերը Դա հասկանալի է:

Սեռի ու ֆիզիկական ուժի տարբերութիւնը արդէն սկզբից ի վեր այլ մարդուն մղել էր դէպի որսորդութիւն, անասնապահութիւն, պատերազմներ և այլ համանման զբաղմունքներ, իսկ կին մարդուն դէպի պտուղներ ժողովելը, քլունկի ու սրա նման հասարակ գործիքների օգնութեամբ հող մշակելը, կրակի ու օջախի պահպանելը: Այլ մարդու տիրապետութիւնը հայրիշխանութեան հաստատումով աւելի ևս զօրացաւ և ընդհակառակն կնոջ գրութիւնը զգալի ստորացաւ, կինը ընկաւ գրեթէ ճորտային մի աստիճանի վրայ: Սակայն մտաւոր-բարոյական գաղափարներով աւելի զարգացած ժողովրդները կարողացան դուրս գալ իրենց այդ վայրենի, նախնական տնտեսութեան գրութիւնից, որ կրում էր գրեթէ տարերային բնասութիւն, ենթակայ էր բացառապէս բնութեան ուժերին: Եւ ահա շատ ժողովրդների տնտեսական կազմի ու ընտանեկան կեանքի պատմութեան մէջ նըշմարւում է, թէ ինչպէս կին մարդը կարողանում է ժամանակների ընթացքում քիչ թէ շատ բարելաւելու իր գրութիւնն ընտանեկան յարաբերութիւնների մէջ, երբեմն լոկ անասնապահութեամբ, որսորդութեամբ ու պատերազմներով զբաղուող մարդը յետագայում իր վրայ է վերցնում նաև գութանով հող հերկելը, երկիր մշակելը և համանման ծանր շինական աշխատանքները: Այս հանգամանքներում զգալի փոփոխութեան են ենթարկւում և կնոջ գործողութիւնները տնտեսական կեանքում: Կինը այլ ևս իր աշխատանքի ուժերը կենդրոնացնում է միմիայն սնունդի պաշարեղէններ պահելուն վրայ, ընտանիքի տաներսի տնտեսութեան վարելուն և վերջապէս զաւակների կրթութեան վրայ^{*}: Տղամարդու և կին-մարդու աշխատանքի այդ բնական բաժանմանը յարում են նաև նրանց

^{*}) G. Schmoller—Grundriss d' allgemeinen Volkswirtschaftslehre I, 229.

որդիններն ու դստերը, հարսներն ու փեսաները, Այսպիսով նահապետական գերդաստանի սահմաններում գոյանում են որոշ տնտեսական պարտականութիւններ, աշխատանքների բաժանումներ, որոնք յետագայում սոցիալտնտեսական յաջորդ զարգացման շրջանների նկատմամբ հանդիսանում են իբրեւ առանձնայատուկ և ինքնուրոյն կազմակերպումների սաղմեր, Ուրեմն վերոյիշեալ պայմաններում զարգացած նահապետական գերդաստանի ամբողջ տնտեսական գործունէութեան բնորոշ գիծը կայանում է այն ղեկավար գերի մէջ, որը պատկանում է նահապետին: Նահապետի այդ գերը, այդ ղեկավարող գործոնի նշանակութիւնը շեշտակի աչքի է զարնում հայ գերդաստանի տնտեսական ամբողջ կեանքում, որը ներկայացնում է մի ինքնամփոփ տնտեսութիւն այն մտքով, ինչպէս դա մի փոքր վերը պարզեցինք:

Հայ նահապետական գերդաստանի ամբողջ տնտեսական գործունէութիւնը բաժանուած է երկու տեսակ աշխատանքի՝ դրսի և ներսի: Դրսի, գլխաւորապէս դաշտային ու շինական աշխատանքները կատարում են այր մարդիկ տան-մեծի, նահապետի ղեկավարութեամբ, որը շատ անգամ ինքն անձամբ անմիջապէս չի մասնակցում այդ աշխատանքներին, այլ միայն ղեկավարում, տնօրինում է աշխատաւոր ձեռքերը, բաժանում է սրանց իւրաքանչիւրի պարտականութիւնները, որոնք ըստ սովորութեան արդէն մի անգամ առ միշտ սահմանուած են ընտանեկան սովորութիւններով և անյողդողդ պահպանւում են: Ծանր աշխատանքները կատարում են ընտանիքի աւագ անդամները, իսկ կրտսեր անդամները գլխաւորապէս հօտաղներ են լինում վարուցանքի տեւն, կալսում, անասունների վրայ հոգ տանում և այլն: * Պ. Բէնսէն Բուլանըխի հայ գերդաստանի տնտեսական կեանքը նկարագրելիս հետեւեալն է ասում. «Գործը կամ աշխա-

*) Зелинский—Народно—юридическіе обычаи закавказских армянъ, Էր. 24—25

տութիւնը որովհետեւ միութեամբ կերթայ, գարուն բացուելուն պէս առաջիններէն (այր մարդկանցից) մէկը հօտաղ է, միւսը մաճկալ, մէկը ցանող ու վարող, միւսը քաղող, երկրորդը կապող, երրորդը փոցխող, չորրորդը կրող ու ծեծող և այլն» * Տան մեծը ղեկավար ու կազմակերպիչ հանգիստանալով գերդաստանի ամբողջ տնտեսական գործունէութեան, անշուշտ ինքն է անելու նաեւ բոլոր ծախսերն և ընդ նմին բոլոր եկամուտներն էլ մտնում են նրա տնօրինութեան ներքոյ, ժողովրդական առածը ասում է՝ «մարդը դրսու պատ է, կնիկը ներսի»։ Ինչպէս այր մարդիկ դուրսը, նոյնպէս էլ կանայք ներսն են աշխատում, և այդ աշխատանքն ըստ հասակի ու իրենց դրութեան բաժանւում է բոլոր կանանց մէջ։ Մօր, տատի, այսինքն նահապետի կնոջ (եթէ վերջինս կենդանի չէ, այն ատեն ամենաւագ հարսը) ղեկավարութեան տակ է գտնւում ընտանիքի ներքին կառավարութիւնը։ Նա էլ նոյնպէս «անսահման իշխանութեամբ կառավարում է տան գործերը և հրամայում է հարսերին»։ Նա է աշխատանք բաժանողը։ Առանց նրա թոյլատւութեան ոչ մի հարս չի կարող բանալին վերցնել և մի պատառ հաց անգամ հանելու» ** Կանանցից ամենամեծը սովորաբար հաց է թխում, ճաշ պատրաստում, պանիր շինում և այլն, դուստրները պարտաւոր են աղբիւր գնալ ջուր բերելու և օգնել մօրը կերակուր եփելու։ Հարսներից մէկը գունդ ու գրդնակ անող է, միւսը խմոր շաղող, երկրորդը՝ ոչխար ու տաւար կթող, երրորդը՝ ձնում՝ զարկող և այլն։ Նոր բերած հարսի պարտականութիւնն է երեկոյ առաւօտ տան տախտը (յատակը) աւելել, ժելա (աղբի) թափելը, առաւօտը քնից վերկեցողներու օտնամանները պատրաստ պահելը, անկողինք վերցնել ու դարսելը, լուացողներու ձեռաց ջուր ածելը և այլն, և այս ծառայութիւնը կը տւէ, որքան մի ուրիշ նոր հարս բերուած չէ» ***

*) Բէնսէ (հրատ. Ե. Լալայեանի) — Բուլանըխ, երես 146.

**) Ե. Լալայեան — Զաւախք, եր. 177—178.

***) Բէնսէ — Բուլանըխ կամ Հաքք գաւառ, եր. 146.

Նոյնպիսի գծերով են նկարագրում հայ գերդաստանի անտեսական կազմը օտարազգի ականատես ճանապարհորդները, որոնցից բաւական է միայն յիշել Պարօտին ու Հաքստհաուզէնին:

Ուրեմն հայ նահապետական գերդաստանի գոյութեան բոլոր նիւթական անհրաժեշտ բարիքները ստեղծւում են նրա բաղկացուցիչ անդամների սեփական աշխատանքով, և այն էլ երբեմն պարզ, հասարակ կօօպերատիւ (աշխատակցական) գործունէութեամբ: Արտագրողներն ու սպառողները այստեղ ամիփութեամբ են մի և նոյն անտեսութեան մթնոլորտում, միևնոյն տան պարիսպների մէջ: Գերդաստանի աշխատաւորների գործունէութեան ամբողջ ոգին, բովանդակ բնոյթը տողորւած է բնական տնտեսութեան պայմաններով: Ընտանեկան համայնքի անհատական ուժերի միացումն օրգանական ու անօրգան բնութեան գէժ մղուած կռուի մէջ, դառնում է իրօք մի տեսակ ընդհանուր, միաբանացած արտադրողութիւն, որի անմիջական ու անհրաժեշտ հետեւանքն էլ լինում է ընդհանուր սպառումն: Ահա այդ ընդհանուր համայնական արտադրողութեան պրօցեսների շնորհիւ էլ գերդաստանական գոյքը, թէ՛ շարժականը և թէ՛ անշարժը, ստանում է համայնական կօլլեկտիւ բնաւորութիւն, դառնում է ընդհանուր, անբաժանելի սեփականութիւն:

VI

Արդ անհրաժեշտ է պարզել հայ նահապետական գերդաստանի՝ այդ սոցիալական կազմակերպութեան՝ ազգեցութիւնը ընտանիքի անդամների փոխադարձ յարաբերութիւնների վրայ: Նահապետական գերդաստանի իրաւական երևոյթներից իր նշանակութեամբ առաջին տեղն է բռնում մարդու իշխանութիւնը կնոջ վրայ: Դա արամաբանօրէն բղխում է այն սոցիալ-տնտեսական պայմաններից, որոնց մթնոլորտում զարգացել է ընտանեկան կազմը: Քանի որ ընտանեկան կազմը հիմնուած էր մայր-իշխանական սկզբունքների վրայ, պարզ է, որ կինը-մայրը

գլխավոր կենդրոնն էր, որի շուրջը համախմբւում էր ընտանիքը, ուր ամուսինը միայն անցողակի, ժամանակաւոր նշանակութիւն ունէր և իր իրաւական-տնտեսական դրութեամբ պատկանում էր միմիայն իր մայրական սերնդական ընտանիքին և ոչ թէ այն կնոջ ընտանիքին, որի հետ կապուած էր եղել լոկ կարճատեւ, վաղանցուկ սեռական յարաբերութիւններով. պատկանում էր իր մօր ընտանիքին, ուր տարածւում էին կնոջ-մօր իրաւունքները և նոյն իսկ երբեմն իշխանութիւնը: Միանգամայն ուրիշ պատկեր է ներկայացնում կնոջ և այր մարդու իրաւական-հասարակական յարաբերութիւնները հայրիշխանութեան մըթնոլորդում: Մենք արդէն գիտենք, որ նահապետական գերդաստանը ներկայացնում է տնտեսական շահերով, համայնական սեփականատիրական սկզբունքով հիմնաւորւած մի կազմ, հետեւապէս կինը, որ այլացեղ (էքսոգամի) ամուսնութեան գերիշխանութեան շնորհիւ հանապազ վերցնւում էր օտար սերնդից կամ առեւանգման և կամ գնման միջոցով, անկարող է մասնակից լինել ամուսնու սերնդական խմբակի ինչքի մէջ, համարուել համայնական սեփականութեան տէրերի հետ միասին հաւասար իրաւունքներով: Սակայն, անհրաժեշտ է այստեղ նկատել որ յետագայում կինը, զրկուած լինելով ամեն մի իրաւունքից իր համար օտար սերնդի, ընտանեկան համայնքի ստացուածքի ու ընչքի վերաբերմամբ, այնուամենայնիւ սեփականատիրական որոշ իրաւունք ունի այն իրերի նկատմամբ, որոնք նա բերել է իր ամուսնութեամբ իր մարդու ընտանիքը: Այդ ստացուածքը ի հարկէ սկզբնւում շատ չնչին ու սակաւթիւ էր և բաղկանում էր բացառապէս զգեստների ու զարդերի իրերից, որոնց վրայ, ինչպէս արդէն առիթ ունեցանք տեսնելու հայ սովորութեական իրաւունքից, ոչ մի իրաւունք չէր տարածւում նահապետական գերդաստանը: Կինը օտար ցեղից էր բերւած գրեթէ ոյժով, բռնի զօրութեամբ և պահւում էր մարդու գերդաստանի մէջ, հեռու և անջատուած իր մայրական սերնդի ընտանիքից, դառնում էր այստեղ մի օբ-

յեկտ, ենթարկուած այր մարդու, իր առեւանգողի, գնողի իշխանութեանը, մատնուած նրա լիազօր իրաւունքին: Մարդու սեփականատիրական իշխանութիւնը տարածուած էր նաեւ կնոջ վրայ, իբրեւ ընտանիքի, տան համար ձեռք բերուած ինչքի մի մասը: Այսպէս էր դա գոնէ հայրիշխանական ընտանիքի զարգացման առաջին աստիճաններում, երբ հայրական իրաւունքը, հօրական գերիշխանութեան սկզբունքը միանգամայն վերացրեց հասարակութեան սոցեալ-տնտեսական յարաբերութիւնների իրականութիւնից մայրիշխանութեան գոյութիւնը: Եւ այդ իր սկզբնական քայլերում հայրական իրաւունքը աւելի շեշտակի, աւելի կտրուկ էր հանդէս գալիս, իբրեւ մի յաղթական սկզբունք, որ տապալել էր հին կարգերը և ուժգին թափով, առանց վարանումների ամուր հիմքերի վրայ էր կառուցանում իր գոյութիւնը: Այնուհետեւ հայրն էր կենդրոնացնում իր շուրջը ընտանիքի էութիւնը, իր անձնաւորութեամբ էր իրաւական նշանակութիւն տալիս ընտանեկան համայնքի բաղկացուցիչ անձերի, նմանապէս և կնոջ սոցեալ-տնտեսական դրութեանը:

Հայրիշխանութեան հետ միանգամայն յեղաշրջւում են հասարակական փոխադարձ յարաբերութիւնների իրաւաբանական հայեացքները, որոնք յետագայում որոշ կուլտուրական պայմաններում աւելի ազնուացան ու կորցրին իրենց նախնական, պրիմիտիւ արտայայտումն, որ ենթակայ էր հանապազ բռնի ոյժի, կոպիտ գերիշխանական բնազդներին: Հայրական իրաւունքի այդ տեսակ աշխարհայեացքը կնոջ վերաբերմամբ տեղէ գտել նաեւ հռովմէական իրաւունքի մէջ manus-ի հիմնարկութիւնով: Ըստ հռովմէական իրաւունքի manus mariti (բառացի ամուսնու ձեռքը, այսինքն ամուսնու իշխանութիւնը) գերդաստանի անդամների վրայ տարածուած տանուտիրական իշխանութեան երեւոյթներից մէկն է, դա մի բաղկացուցիչ մասն է patria potestas-ի հայրական իշխանութիւն: Ուրեմն կինը manus-ի զօրութեամբ համարուում է թէև գերդաստանի անդամ, սակայն իր իրաւական դրութեամբ, իբ

ունեցած՝ իրաւունքների բովանդակութեամբ կանգնած է հաւահաւասար աստիճանի վրայ գերդաստանի զաւակների՝ անշափահաս որդիների հետ—*filiacfamiliasloes* (ընտանիքի դասեր տեղ)։ Տանուտէրի՝ իւրաքանչիւր այր մարդու այդ իրաւունքն իր կնոջ վերաբերմամբ տարածոււմ է թէ անձնական և թէ ընչական յարաբերութիւնների սահմաններում։ Կրկնում ենք, որ այդ *manus*-ը ժողովրդական իրաւագիտակցութեան մէջ յարաբերական բնոյթ է ստանում, նայելով նրա սոցեալ-կուլտուրական զարգացման աստիճանին և ըստ այնմն էլ արձագանք է գտնում թէ օրէնսդրական եղանակով սահմանած օրէնքների մէջ և թէ տիրապետող սովորութեական իրաւունքի մէջ։

Ահա այդ *manus*-ը, ամուսնու իրաւունքը կնոջ վերաբերմամբ, որով բնորոշոււմ է մօր-կնոջ դրութիւնը նահապետի գերդաստանում, ցայտուն արտայայտոււմ է նաև հայ սովորութեական իրաւունքի աշխարհում և արտայայտոււմ է իր զարգացման զանազան աստիճաններում։ Այդ հայրիշխանական իրաւունքի վերաբերմունքը դէպի կնոջ թէ անձնական և թէ ընչական իրաւական դրութիւնը բնորոշ գոյն է ստանում նաև հայկական հին օրէնսդրական ժողովածուների և ընդհանրապէս գրաւոր օրէնքների ու կանոնների մէջ։

Տեսնենք՝ թէ ինչպէս է արտայայտոււմ *manus mariti*-ն հայկական իրականութեան մէջ։ Ինչ իրաւական դիրք է ունեցել հայ կինը նահապետական գերդաստանի սահմաններում։

Խ. Սամուկեան.

(Շարունակելի)։